

ՊՐԵՍԵ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ժր.  
Վեցամսեայ 6 Ժր.

ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

Երկու քիւրակի ծառով  
Տարեկան 14 Ժր.  
Վեցամսեայ 7 Ժր.

ՍՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Ժր.  
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Ծանոցման տողը  
20 ամսով

# ՀԱՅ ԳԵՂ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՆԱԲԻ ՆԻ ՇԱԲԱԹ

Գրադրութիւն կու չի  
ընդունիր



## ՄԱՅ

### ՍԵՂՐԱԿԵԱՆ

#### ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Հայ ազգը կորսնցուց իր անհնազանդութիւնը և զարգացեալ եկեղեցականներէն մին, Աստուխանի բնակալ Առաջնորդ Սեղրակեան Արքեպիսկոպոսը, որ լեւորդի հիւանդութեամբ նոյեմ. 11 ին գիշերը վախճանեց է Թիֆլիզի մէջ ի հասակի 63 ամաց:

Հանգուցելոյն թաղման հանգէսը նմանը չառ քիչ անգամ տեսնուած շքով եւ ի ներկայութեան մօտ 10,000 ցաւակից ազգայնոց կատարուած է նոյեմբ. 19 ին Թիֆլիզի Առաջնորդանիստ վանքի եկեղեցւոյ բակին մէջ, սւր և ամփոփուեր է իր մարմինը երկար և փառաւոր հանգիստկատարութիւններէ յետոյ:

Սեղրակեան Արքեպիսկոպոս իր աղնիւ բնաւորութեամբը, բարի ձիրքերովը և ազգագուտ գործունէութեամբը ռուսահայոց ստուար մասին համակրական սէրը կը վայելէր: Նա այնչափ սիրուած էր ռուսահայ ազգայիններէ, որ արդէն սահմանուած էր ըլլալը ապագայ կաթողիկոսութեան առաջին ընտրելին: Ամենուն յոյսը այն էր որ Սեղրակեան պետի կարողանար վերականգնել ու բարձրացնել Ելմիածնի նախկին համբաւը, արմատախիւ ընելով անոր ներկայ անպատուարեւր անիշխանական յուր վիճակը: Սակայն լափտոս որ հանգուցելոյն վաղահաս մահը արգելանք ալ յոյսը եւ ի գերեւ հանեց:

Մեր գրաշարներէն միոյն անակնկալ մեկնումի պատճառաւ լիբանուքը չհրատարակուեցաւ շաբաթ օր:

#### ՍԱՐՈՔԵՆԱԲԻ ԽՆԴԻՐ

Քաղաքական աշխարհի մէջ այս միջոցիս յուզուած խնդիրներէն Մարտեան խնդիրը առաջին կարգը բռնելով ամեն տէրութեանց և դիւանագիտաց ուշադրութիւնը գրաւած է: Խնդրոյն առած նորանոր հանգամանքներն այնպէս ցոյց կուտան որ առանց թնդանօթաց որոտման և արինահեղութեանց անոր լուծումը ընել անկարելի պիտի ըլլայ:

Մեր բնթերցողաց յայտնի է արդէն որ անցեալինքը Այճէ-զիթայի մէջ՝ եւրոպական տերութեանց կողմէ ընտրուած լիաօր պատուիրակաց համաժողով մը տեղի ունեցաւ և թէ այս համաժողովը երկար հակառակութիւններէ ու բանակցութիւններէ վերջը, կրցաւ համաձայնութիւն գոյացնելով Մարքի մէջ ներմուծելի բարեկարգութեանց ծրագիրները պատրաստել և վաւերացնել: Եւ որովհետեւ Մարքի անմիջական սահմանակիցներն են Պրանսա և Սպանիա, որոնց Մարքի մէջ ունեցած շահերը գերազաւ կը համարուին և են միւս ամեն տէրութեանց այն երկրի մէջ ունեցած շահերէն, ուստի տէրութեանց միաձայն հաւանութեամբը համաժողովը հարկ տեսաւ Մարքի համար որոշեալ բարենորոգմանց կարգադրութիւնը յանձնել Պրանսայի և Սպանիոյ տաքով անոնց փոխանորդական լիազօր իրաւասութիւն գործելու եղանակի մասին:

Արդ թէ՛ն համաժողովը Մարքի համար հարկ դատած որոշումները ըրաւ և ծրագիրներ պատրաստեց, թէ՛ն Մարքի Սուլթան Ապտ-էլ-Ազիզն ալ այն որոշումներն ու ծրագիրները մի

քիչ ընդդիմութենէ յետոյ հարկադրեցաւ ընդունիլ և վաւերացնել: Սակայն անոնց գործադրութիւնը ահա՛ հիմա մեծ խոչընդոտներու հարկաւ է:

Ի զուր երեք ամսէ ի վեր Պրանսա և Սպանիա տշխատեցան սկսիլ Մարքի բարեկարգութեանց գործին, և ի զուր դիւանական եղանակներով իրենց խրատները լսել տալ ուղեցին Մահմէտին: Ամեն արգելքներու և կամակորութեան հանդիպեցան:

Եկաւ ժամը ուրեմն որ Պրանսա և Սպանիա Եւրոպայի կամքը և որոշումները կատարեն ուրիշ եղանակաւ, քանի որ Մարքիք համադիւ խօսքերէ չեն հասկնար, և իրենց վեհապետը Ապտ-էլ-Ազիզ իր ընդունած ու վաւերացուցած բարենորոգմանց գործադրութեանը գէժ արգելք արգելքի վրայ կը հանէ ամեն օր:

Այս միջոցիս ահա Պրանսա և Սպանիա կատարեալ համաձայնութիւն գոյացուցած են, և թանձրի առաջը համախմբած են 9 առաջին կարգի զրահաւորներ, որոց 6ը Պրանսական և 3ը Սպանական են: Կըսուի թէ եթէ այս նաւային ցոյցը բաւական չըլլայ Մարքեան կառաւարութեան խօսք հասկնելու, ծովու կալները արտօնուած են ցամաքը զօրք հանել: Ասոր հետեւանքէն ալ պիտի ըլլայ Պրանսա և Սպանիա զինու զօրութեամբ պիտի կատարեն իրենց յանձն առած պաշտօնը, թէ պարզօրէն ցոյցով չը պիտի շատանան:

Իրաւ է, որ Ֆրանսական բարլամէնթը չէ ուզած որ զօրք զըրկուի ի Մարք, և Բելժանսօի նախարարութիւնն ալ յայտարարած է որ Պրանսա զինուորական արշաւանք ընելու մտադիր չէ, բայց մեքը անցեալէն փորձառու եղած գիտենք թէ՛ այսպիսի նախարարական յայտարարութիւնք ո՛րչափ անակնկալներու ենթակալ են:

Արգէն ահա ֆրանսական և սպանական լոկ նաւային ցուցարարութիւնը բաւական եղած է Մարքեցոյ գլուխը աւաքնելու

և ինչպէս կրնէ Լօնտօնէն քննուած հեռագիր մը, անուանի Ռէ-զոլիւն լեռնակա՞ն ցեղերուն մէջ խիստ գրգռէր է ժողովուրդը և մտադիր է եղեր 15,000 զինուորաւ մարդոց հետ Թանձրի վրայ քալել և բոլոր Եւրոպացիները շարգել:

Ասոր նման թանձրէ 12 դեկտեմբերին քաջուած հեռագիր մալ կրնէ թէ՛ Թանձրէն մինչև 30 փարոսի հեռուն եղած մըլղկիներու մէջ յայտարարուած է թէ քրիստոնեաները պիտի արշաւեն ի Մարք, հետեւաբար ժողովրդեան հրաւէր կարգաւորած է սուրբ պատկառածի պատրաստուելու համար և ըսուէր է թէ Ռազուլին ստակ ու զէնք պիտի մատակարարէ անոնց որ ջուներն:

Վերջին հեռագրաւոր մալ կը տեղեկացնէ Սուլթանին հրամանաւ օգտտեալական նախարարը Թանձր զօրք տանիլու համար ճամբայ ելած է և թէ ճէրիֆ էլ Մարքի արդէն հասուցած է հոն 600 ձիաւոր և 1500 հետեւակ զօրքեր:

Այս դիմադրական կրօնամով գրգռութիւնները և, զինուորական շարժումները արդեօք չպիտի հարկադրեն Պրանսան ու Սպանիան իրենց խաղաղասիրական դիրքը թողլով նետուիլ Մարքեան պատերազմի մը մէջ:

Քիչ ատենէն պիտի հասկցուի այս:

Հ.

#### ՍՈՒԼԹԱՆԸ ՀԻՒԱՆԴ

—\*—

Հակառակ Պոլսոյ պաշտօնական չինձու տեղեկութեանց, Եւրոպայի լեռնաօրագիրները կը հաստատեն նա կը վաւերացնեն Սուլթանի հիւանդութիւնը: Պրանսայի «Թան»-ը՝ մէկ հեռագրական լուրով՝ բողոքովն ստուգեց հաղակեր Սուլթանին մատաղուտ մահը: Այսօր Ղէզլու. 26 Ն. Տ.) խաղաղական ամենէն հեղինակաւոր օրագիրը «Թուրքիէ տեղւա Սէնտ» իր յատուկ թղթակցի յեռազայ նամակովը անժխտելիօրէն կապահովցնէ միւ մարդասպանին ֆրանսական մանրամասն ճշգրիտ լուրերն: «Թան» որ — կը գրէ Թղթակցը — կը

չարունակութիւն խոստով Սուլթանին հիւանդութեան եւ հաւանականօրէն աւերակ դռն ուղիքի ատեն ապրելուն վերայ, լաւ է ամենայն ինչ ստուգել, պատմելով ճշդութեամբ այն ամեն բան զոր լսած ենք, եւ որոնք իրացնէ ստոյգ են:

Սուլթանը իրօք հիւանդ է, երկկամաց եւ փամփուշտի ծանր հիւանդութեամբ, յսկ քաղցկեղ բացարձակապէս չունի:

Բայց ինչպէս որ հոս մեծամեծ անձնաւորութեանց համար սովորութիւն կայ ծածկել ահող հիւանդութիւնը որով կը տառապին: Սուլթանին հիւանդութիւնն ի ծածուկ պահուեցաւ—նոյն իսկ իր մտերիմներէն—մինչեւ երկու ամիս, երբ տն չը կըցտու «Սէլամլըք» երթալ՝ բռնուելով միզարիւնութեամբ եւ միզարգելութեան ծանր ապօքային:

Իր սովորական բժիշկը, Իպրահիմ փաշա, իր օգնականին աջակցութեամբ շատեց զարման տանել հիւանդութեանը. բայց չը յաջողեցաւ, կանչեց այն ատեն ուրիշ բժիշկ մը—միշտ թուրք պետական ֆէնան պէյ, որ աւելի երջալ Սուլթանին ցաւերը բուժել: Ի վարձատրութիւն, պետականը զօրաբանի զօրապետ ական բարձր աստիճան հասաւ:

Այլ սակայն Սուլթանի հիւանդութեան յուր փայլակի պէս տարած օրով իր օտար Իպրահիմ փաշայի խորհրդի համաձայն, Արդիւ Համիդ կորոյէ Բերլինէն բերել տալ հոշակաւոր պրոֆէսոր Բէրկմանն, որ հոս հասաւ, միտին բերելով իր օգնականը պրոֆ Բիւր:

Արդ կրնամ զձեզ ապահովցնել ամենաստոյգ կերպով որ պրոֆ Բէրկմանն Սուլթանին երբէք այցելութիւն չը տուաւ զի բնաւ անոր հետ չը խօսեցաւ, վասն զի Արդիւ Համիդ կը վստահ երկու կամ երեք անձանց, որ չարունակ իր քովը կը կենան, զայով եւրոպական գիտութեանց, ինքք անոնց անտարբեր է:

Դարձանատար բժիշկները Սուլթանին հիւանդութեան վրայ մանրամասն տեղեկութիւն կուտան պրոֆ. Բէրկմանին ասի կը տարրալուծէ մէզը քանի մը անգամ, եւ վերջապէս կը պատրաստէ զրաւ ր տեղեկագիր մը, զոր կը յանձնեն Սուլթանին: Բէրկմանն մեկնելուն հոս թողոց իր օգնականը Բիւր, իբրեւ խորհրդատու Սուլթանի բժիշկներուն:

Արդիւ Համիդ կը դիմէ փորձառական դարձաններու, առանց նոյն իսկ իմացնելու իր բժիշկներուն Ասոր փորձը մի քանի օր է որ տեղի ունեցաւ, այսպէս՝ պալատին զեղագործը՝ Պէթրէֆէնդի՝ Սուլթանին խաւրեց խաշոյ կամ սպիղանի մը որ անոր ցաւերը բաւական մեղմացուց, եւ ասոր վրայ պաշտօնական լրագրիւններու մէջ կարդացուեցաւ որ Պէթրէֆէնդի մեծարուած էր Օսմանիէյի մեծ շքանշանով եւ ազատադատու պատուանշանով, յար եւ նման ինչպէս Գերմանիոյ կայսրը: Այս լուրերը այլեւս ամենուին ծանօթ են: Տարակոյս չըկայ սակայն, որ Արդիւ Համիդ շատ ուժեղաբէժ է՝ տրակարութեանը առթած ցաւերուն պատճառով:

Ուրիշ բան չը գիտցուի, եւ ոչ ալ կարելի է գիտնալ. մէջտեղը կեղծքները առայժմ կը պտտին, ամեն մարդ իր կարծիքը կուզէ բերել. բայց ով որ ծանօթ է տեղեւոյ, գիտէ ստոյգ ինչ ինչ բաներ ընդդէմ դուռնէն դուրս չեն ելլեր...

Սուլթանը սակայն կը պարագի իր գործերուն, եւ քանի օր է որ հանդիսական ունեցողութեան ընդունուեցաւ Միացեալ Նահանգի միտիստ Լիւմէն որ իրեն ներկայացուց գնապատկան իւր նոր վկայութիւնները:

Ահաւասիկ Ամերիկայի ուրիշ մէկ յաղթական քայլը՝ վաղուց ի վեր է որ Միացեալ Նահանգի խնդրանքը, թէ իր ներկայացուցիչը Պոլսոյ մէջ գնապատկանութեան բարձրանայ, նախ աստիճան հակառակութիւն կրեց թուրքաւէն եւ յաջորդաբար Եւրոպիոյ տէրութիւններէն:

Խնդիրը որ տարիէ մը ի վեր կը քաջջուէր տեղեկութիւններով եւ հակա տեղեկութիւններով, իր ուժումը ունեցաւ Սուլթանին՝ Պ. Լիւմէնը հանդիսաւորապէս ընդունելով:

Շատ մը երեւակայելով բաներ կըսուին թուրքիոյ գահին յաջորդորին համար եւ հաւանական յաջորդներուն վրայ:

Իրը այս է որ թուրքիոյ մէջ յաջորդութիւնը կ'ընայ ընտանիքին ամենէն տարեցին, որ կրնայ ըլլալ հօրեղբայր, հօրեղորորդի կամ թոռն Սուլթանին, խնդիր չի վերջին:

Արդ այն որ այս հանգամանքներուն մէջ կը գտնուի է Սուլթանին եղբայրը—Բէշադէֆէնդին:

Ասի ամենախիստ հսկողութեան տակ

կապրի, կամ լաւ եւս ըսելով կատարելապէս տարազրեայի մը գիրքի մէջն է: Ոչ մէկ տեղ կ'երեւայ, ոչ ոք կըրնայ մօտենալ իր պալատին, ոչ մէկ եւրոպացիի հետ յարաբերութիւն ունի եւ ոչ մէկ թուրք կրնայ տնոր խօսք մը ըսել, վախէ. որ իսկոյն կրնայ ձերբակալուիլ:

Անհաւատալի բաներ են, բայց ըստոյգ՝ այսուհանդերձ ամեն զաղափարական թուրք կը հաւատայ, որ եթէ ան յաջողէ, պիտի ջնջէ այժմեան տիրապետող ոտկայի դրութիւնը—վասնի զի ինքը անոր խիստ փորձը ունի—եւ ամբողջ օսմանցիներուն անձնական ազատութիւն պիտի տայ, բան մը որ այժմ թուրքիոյ մէջ գոյութիւն չունի: Եւ կան շատ մը ծեր թուրքեր որ Բէշադէֆէնդին կը ճանչնան, զեռան շանջատուած, եւ դանի կը նկարագրեն հեզ եւ յառաջդիմութեան նախանձախնդիր: Այս բարետես յոյսերուն սակայն՝ կրնայ խոչնդոտուիլ, որ Բէշադէֆէնդին արդէն իսկ 60 տարեկան է, թէ վերը նկարագրուած իր կեանքը մթազնած է իր միտքը, եւ այս պայմաններուն մէջ, իրմէ բարենորոգումներ եւ յառաջդիմութիւններ քիչ կը յուսացուին:

Արդիւ Համիդ կուզէ իրեն յաջորդ կարգել իր զակրներէն ամենէն սիրածը՝ Բիրհանէտտինը, որ նոյնպէս կ'ըզբաղեալ կը պահուի եւ տոգորուած է իր հօրը զաղափարներով, եւ քաղաքականօրէն բարեկամ Գերմանիային եւ ինքը կը կարծէ թէ միտնայն բարեկամ թուրքիոյ՝ Գերմանիան է: Գերմանիան Սուլթանին այս փափաքը առաջ կուղէ մղել տալ. սակայն իրեն մեծ արգելք է Անգղիան: Սուլթանը իր իղձերուն չի կրնար դիւրաւ հասնիլ, քանի որ ատով իսլամի օրէնքը րոնարարած կը համարուի եւ Սուլթանը ինքնին գիտէ այդ օրինազանցութիւնը մեծ խռովութիւն յառաջ կը բերէ, եւ այս պատճառաւ յաջորդի մասին օ եւ իցէ յուր հաստատութիւն չունին:

Արմենիա

Վաւ եւ անոր գիշերը դրամ փոխադրել փափագողները րոյ դիմեն մեզ: Պաշտամենք դիւրաւստելի, անպայման վստահոյքի եւ անպահովութեան Վառնա Թ. Կ. Ճանկիւլեան

ԲՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ  
ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԴԵՄ

Թիւրքահայոց պատրիարքութիւնը՝ այն օրումնից, որ Նրա աթոռի վրայ բաղմեց Օրմանեան սրբազանը, դարձել է դուռ Պոլսական: Գաւառները, արիւնաներկ, աւեր հայկական գաւառները կարծես դուրս են մնացել պատրիարքական մտահոգութիւնից եւ նա իր «գործունէութիւնը» ամփոփել, ամարեայ բացառապէս Պոլսում կամ շատ շատ Եւրոպական թիւրքաբաղում: Մեր ձեռքն անցած Պոլսական թերթերը ինքն են պատրիարքական այցեւրութիւններ Նկարագրով եւ աստուածաբան սրբազանի գալարուն «հոգեպարար» քարոզներով:

Կան նաեւ զարոյցական հանդէսներ, ուրեմն պատրիարք սրբազանը որոնւմ է երեւալ, կամ մի խոշոր էֆէնդիի թաղում, որի հետ այսպէս թէ այնպէս յիշատակուում է թիւրքահայոց հոգեւոր պետի անունը:

Այս է բոլորը:

Բաւական է այսքանը մի պատրիարքական «թոռ» գոյութիւնն արդարացնելու համար թիւրքաբաղի պէս մի գոթաբուս:

Սահմանադրութիւն չըկայ, ազգային ժողով չըկայ, այնքան զփուսութեամբ այնքան ճիգերով զուլիս ըրած ազգային ինքնավարութիւնից մնացել են միայն յիշողութիւններ:

Ինչ է անուժ Օրմանեան սրբազանը եւ զաւանները...

Պոլսի թերթերում նրանց ծանր դարհուրելի վիճակի մասին բնականաբար ոչինչ չկայ. թիւրքական ցնեղութեան չի թոյլ տալիս նոյնիսկ անմեղ նկարագիր գաւառական կեանքի, հատուկ կտոր լուրերն իսկ ստիպուած են հրաւարակել «Եկեղեցական քրոնիկ» վերնագրի տակ:

Այդ մենք գիտենք:

Բայց գիտենք եւ այն, որ պատրիարքարանը միշտ ամենամանրամասն, ամենաճշգրիտ տեղեկութիւններ է ըստստուժ այն սարսափների, թալանի աւերածի, առեւանգումների մասին որոնց ամեն օր ամեն ժամ ենթակայ է զժաղդ հայ ժողովուրդը գաւառներում: Նոյնիսկ հետզհետէ մեր ձեռքը զփուսութեամբ հասնող նամակներն անկարելի է կարդալ առանց սոսկուած առանց խորագոյն յուզումների:

Ա. ԵՐԵՎԱՆԵԱՆ

ԼԻԱԶԱԿԱՊԵՏՐ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԵՒՎԻՔԻ ՓԱՇԱ

(Շար. նախորդ թիւէ)

Նաեղագրի փախուստն երկու ամիս ետքը Շէվքի փաշան վերադարձած էր:

Վասնայ կիսաբաժնի զօրագունդին ընդհանուր հրամանատարը չափազանց յուզուեցաւ երբ իմացաւ ահաբաժնեին տխուր դէպքը:

Ինչ ընէր... որո՞ւ վրայ կ'սկսած ունենար: Մեծ հանդէս իրեն ըսած էր թէ տունին մէջ թուրք սպասուհի մը առած էր... այդ սպասուհին էր բուն յանցաւորը:

Բայց Շէվքի փաշան հանգարտ չէր: Թէպէտեւ հարիւրանոցը լեցած էր Աստ-

րի. Ձերքէզ ու Հայ աղջիկներով... դարձեալ իր սիրտը Նաեղագրին տուած էր ու անոր վրայ կը մտածէր:

Միեւնոյն ատեն կը ցաւէր իր բարեկամ Նուրի պէյի վրայ ու անոր ուժիրը հոգին կը գոնացնէր անզոռապ վրէժով մը:

Չը մոռնանք յիշելու թէ ապարանքին դէպքը բնաւ մեծ հանրմին վրայ կ'սկսած մը չը յարուցէր նայնպէս Աւազակապետը վտանգի մը չ'ենթարկուեցաւ: Հետեւաբար երբեմն ազատօրէն այդ արեւնալի սեմերէններս կը մըտնէր ու գաղտնի տեսակցութիւններ կ'ունենար մեծ հանրմին հետ:

Հրամանատարը նախապէս չէր ախորժած այդ թափթիպած, մուրացկանի կերպարանքով ու ինկած տէվրի չէն, բայց անգամ մը վալիի ապարանքին մէջ հանդիպած ըլլալով անոր, զարմացած էր անոր բարձր զաղափարներուն վրայ ու այդ օրէն իվեր համակրած էր:

Իրիկուն մը, երբ Շէվքի փաշան իր զեղեցիկ արեւնակը նստած նարկիլէ կը ծխէր, տեսաւ որ Աւազակապետը

կամաց կամաց մեծ պողոտայէն կ'անցնէր: Անմիջապէս դռնիկներէն միոյն պատուրեց որ իմաց ասն իրեն թէ փաշան կուգէր զինքը:

Աւազակապետը սիրով ընդունեց սւ մտու ապարանքը: Դրանիկը դահլիճին լայն սանդուխէն արեւնակն առաջնորդեց զինքը:

Եկու՛ր նայիմ իմաստուն ֆաթի՛ր ըսաւ Շէվքի փաշան իր նենգաւոր աչքը վեր առնելով: Անցեալ օրը վալիին ապարանքն էր. տեսայ որ հասարակ ու ողորմելի մտքի տէր տէրվիշներուն չէին նմանէր... ըսւ մտածումներդ՝ բարձր ու զաղափարներդ լայն էին իրենց բովանդակութեանց մէջ: Այդ պատճառաւ սիրեցի քեզ ու կը փափաքեմ որ բարեկամս ըլլաս...

Ամենայն սիրով... մըմնեց Աւազակապետը: Ես ուրիշ եմ որ ձեզի պէս բարձրաստիճան հրամանատարի մը բարեկամը կը համարուիմ:

Որչա՛փ ատեն կայ որ քաղաքը կը գտնուիս:

Շատ չէ՛, հաղիւ երեք ամիս կըլլայ:

— Կեանքդ ու՞ր անցուցած ես — Ես: — Այո:

— Տառապանքներու մէջ, փաշա էօֆէնաբի:

— Բայց այդ տառապանքը չքաւորութեան արդիւնք չ'է. ես կը հաւատամ թէ քեզի պէս իմաստուն մարդ մը կրնար մեծ պաշտօններու հասնիլ ու երջանիկ կեանք մը վարել:

— Իրաւ է. չքաւորութիւնն իմ տառապանքս եղած չ'է, այլ՝ գիտակցութիւնս:

— Բացատրէ՛. ինչ ըսել կուզես, ընդհատեց գոռոզ հրամանատարը՝ նարկիլէի մարրուճը բերնէն վար ձգելով:

— Ըսի՛ կուգեմ թէ, յարեց Աւազակապետն անվրդով եղանակաւ մը, ներքին. խորհրդաւոր ու ծածկաւոր պարտականութիւն մը զգացի խառնուածքիս մէջ ու գայն կատարելու համար աղետալի բայց ճշմարիտ ճամբայ մը ընտրեցի ինձի:

— Միթէ՞, մենք զուրկ ենք ատանկ գիտակցութենէ մը:

— Ո՛չ, զուրկ չ'էք... բայց ձեր հո-

Յինիկ անպատկառութեամբ, որ յատուկ է Հայոցի պաշտօնականներին, որոնք տակ է տրուում հայր եւ ընտանեկան պատիւը եւ սրբութիւնները թալան, աւերած. սպանութիւններ ամեն կողմ երկիրը գատարկուած է. ամէն շարաթ հարկերնեղ հայեր զբլլալ են ամենու կորչում են անհրաժեշտ, դաժան հարկերից:

Այդ բոլորը գիտէ շատ լաւ գիտէ «Պօլսի» պատրիարքը եւ բողոքի ոչ մի խօսք, զայրութիւն ոչ մի ճիշտ կողմից:

Հանդէսներ, ճառեր, թափօրներ. «Սէլալըքի» ողջոյններ:

Այս է պատրիարքութիւնը:

Օ՛ր, մենք գիտենք որ հայ պատրիարքը ամենակարող չէ. մենք գիտենք որ նրա խօսքը, նրա բողոքը ամենազօր չէ, որ նա գրուած է քաղաքական ծանր, փոփոկ պատմաների մէջ: Բայց գիտենք եւ այն. որ նրա ձայնը, յամենայն դէպս, այն ձայններից չէ, որ միշտ կարելի լինի արհամարհել: Որքան եւ զարչելի եւ զազանարարոյ է թիւրքական կառավարութիւնը նա այնուամենայնիւ միշտ ստորադնած է եղել սիրաշունչ հայ պատրիարքներին՝ նրանց շրթունքներին ցանկացած բառերը դնելու համար:

Պօլսի պատրիարքը ազգու, հեղինակաւոր խօսքը եթէ չի կարող հիմնական դարման անել հայ ժողովրդի ցանկերին, բայց նա դեռ բաւական հզօր է զսպելու համար մի սրիկայ պաշտօնեայ, մի գայմազամ, մի աւազակ մարդասպան քերթ, քէք, նա կարող է թէկուզ թոյլ կերպով արձագանք տալ իր ժողովրդի անլուր տառապանքներին, նրանց ծով արցունքը ախարի առաջ փռել: Այդ է. որ չի անում Օրմանեան պատրիարքը: այդ է որ նա պարտական է անել, եթէ ուզուի է հայութեան պատրիարք համարել եւ ոչ թէ միայն Պօլսի:

«Երկիր»

### ԿՈՒՋԷՔԻ ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ ՄԵԱԽՈՏ ՄԵԵԼ. ԽՆԴԻՆԵՔԻ ԱՄԵՆ ՏԵՂ Մ. ԹՈՎՄԱՍԵԱՆ ԵՒ ԸՆԿԻ ՄԵԱԽՈՏ ԳԼԱՆԻԿՆԵՐԸ:

գեկան խառնուածքը, ձեր ապրելու եւ վայելելու պայմանները, ձեր գերքը, ձեր գիտակցութիւնը բոլորովին ասարեւր են իմինէն: Մի՛ գարմանաք, փաշա էֆէնտի, երբ դուք աչքերնիդ թշուառութեան մէջ բանայիք, երբ դուք ճնողքով մուրալը տեսնէիք, երբ դուք սիրելիներուդ արցունք թափելը զգայիք ձեր մանկութեան ամենէն անուշ օրերու մէջ... եւ յետայ հաբուստ բլլայիք օր մը, պիտի կրնայիք մոռնալ թէ թշուառութիւնն ինչպէ՞ս անողքաբար կը ծանրանար օրորոցիդ ու մանկական քաղցր տարիքիդ վրայ:

— Ինչ ընենք... աշխարհքս անանկ է: Երբ աղէկ օրերու մէջ կը գտնուինք պէտք է մոռնանք անցեալը... եթէ ոչ կեանքը մուծ կ'անցնի:

— Այո՛, բայց ամենու համար չ'է ատելիա Մարդիկ կան, որոնց սրտին վրայ թշուառութիւնը վէրք մը կը դառնայ ու անոնց հոգին չ'անուշաբ աշխարհքս ոչ մէկ հրճանկութեան հանդէպ:

Շէվքի փաշա տարօրինակ ոտասու

### ԷՋՄԻԱՅՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Էջմիածինը իր խել մը ան կարգութեանց ու հակասական զարուղի գործողութեանց վրայ օրէ օր խօսել կուտայ:

Վերջին տեղեկութեանց նայելով Խորմեան կաթողիկոսը Սուրէնեաց Արքեպիսկոպոսի ուղղած մի նորագոյն կոնգակով ետ առած է իր նախորդ մէկ կոնգակը՝ որով արտօնած էր Միաբանութիւնը մասնաւոր ժողովներով ընտրել պաշտօնեաները: Այս ժողովները հաղիւ կաղմուած սկսած էին գործիւ եւ ահա Խորմեան կը լուծէ եւ կը ջնջէ նոր կոնգակով մը իր նախորդ կարգադրութիւնները եւ այն ժողովները, որ իր հրամանաւ կազմուած էին:

Այժմ պաշտօնեաները պիտի ընտրուին դարձեալ առաջուան պէս ուղղակի կաթողիկոսի կողմանէ:

Մեղ շատ ցաւալի է անսելի Հայաստանեաց եկեղեցւոյ Հովուապետի կողմէ այսպիսի թեթեւամտական գործողութիւններ եւ մտաց յանկարծական փոփոխութիւններ:

Կամ այն է՝ որ Խորմեան ցնորած է ու ըրածը չգիտէ, կամ այն է՝ որ ճնշման ներքեւ կաշկանդուած ուրիշի կամաց գերի եղած կը գործէ:

Ասոնցմէ որն ալ եղած ըլլայ այլեւ մեղ համար յուսալի չէ իրմէ խելացի տնօրինութիւններ սպասել: Եւ մենք այս համոզումը գոյացուցած էինք արդէն, երբ կարտօնէր կիներու ընտրող եւ ընտրելի ըլլալը: այրի քահանայից կրկնամուսնութիւնը եւ այլ ասոնց նման զարմանալի բաներ:

Ամօթ չէ, մարդս տարիքն առնելով կրնայ անոր յիշողութիւնը կորսուիլ եւ ցնորիւ բայց այսպի-

սի պարագայի մը մէջ, չկայ միթէ հնարը առաջն առնելու այն փաստաց, որք կրնան յառաջանալ ցնդածի մը ըրած անխոհեմ որոշումներէն:

Մեր գիտցածը՝ երբ աղբի մը գլուխը, վեհապետ մը, իշխան մը կը ցնորի անոր հանգստութիւն կուտան, տեղը խնամակալ մը կընտրեն, որ կը գործէ այն ինչ ազօր իշխանութեամբ որ ցնորածը ունէր:

Եթե այս բանը կայսեր մը ու թագաւորի մը համար ընել կարելի է, ինչո՞ւ կաթողիկոսի մը համար ընելը չպիտի ըլլայ կարելի:

Մեզի անպատճառ այս կամ այն մարդը պէտք է, թէ խելօք գործող մարդ: Մեզ ի՞նչ փոյթ, թէ նորա անունը Պօղոս է թէ Ապօղոս, հերիք է, որ նա աղբին օգտակար ըլլայ եւ ոչ փաստաւոր: Այս է ահա բոլոր աղբին փափաքածն ու սպասածը եւ ոչ այլ ինչ:

Հ.

### ԱՆԿՈՒՄԻ ՃԱՄՐՈՒՆ ՎՐԱՅ



Ա.

«Հայրենիք»ի վերջին թիւին մէջ Վառձեան կրկին նախադրուած մը ունի «բաժանէ որ միացնեն» արտաոտց վերնագրով: Գաղափարի եւ գործի ամէն տեսակ այլանդակութեանց այս անկուս եւ անզուգական պաշտպանը այս անգամ եւս հրապարակ կուգայ փաստաբանելու թէ յեղափոխական մարմիններու միացման գործին յաջողութեանը համար անհրաժեշտ էր եւ պայման էր որ այդ միութիւնը կազմուէր կոչուած տարրերը նախապէս անջատուէին իրարմէ եթէ ուրոյն կուսակցութիւններ եւ իրենց մասնաւոր դաւանանքներու մէջ ամբանալ յետոյ, միայն ձեռնարկէին տարբեր կուսակցութեանց հետ համեարայնելու:

— Ա՛խ, ի՞նչ ըսեմ... գուցէ՛ կը զարմանաք, երբ յայտնեմ թէ տարբեր միջոցը չէ որ իմ առաջապանքս եղած է, այլ արդար վրէժնորդութիւն մը...

— Արդար վրէժնորդութիւն մը:

— Ըչմարեմ է:

— Որո՞ւ գէտ:

— Իմ ընտանիքիս թշուառութիւնը պատրաստող ձեռքի մը գէտ:

— Ո՞վ է... սէր կը գտնուի:

— Չեմ գիտեր անոր ուր գտնուիլը... տարբերէ իվեր կը թափառի, բայց հետք մը չ'երեւար:

— Միւսերումն է:

— Այո՛, միւսերումն է... մասնաւոր անանկ մէկը, որ մեր ձեռքէն հաց կերած է ու իր անուշ քունը մեր տեմերու վրայ անցուցած է: Ամենէն ետքը, վատարար իր ձեռքը միեւ մը երջանկութեան մէջ ու աւերակներու տակ թողուց ընտանիքս: Ո՛հ, այս բաները ձեր մեծութեանը չ'ի պիտի յայտնէի, եթէ չը համոզուէի որ զուք բարի սիրտ մը ունիք կուրծքերուդ ներքեւ:

Երբ ժամանակի անոգոք հղկվածն միջոցին ճշմարտութիւնը կուգայ յանկարծ փայլաւորելով մութին մէջ ձախորդ ճամբաներու մատնուած ամբօխին վրայ—այն ատեն ահա, կարծես հրաւիրական անխոսափելի ձայնէ մը կ'անջուած, նոր զգի առաջնորդ Վառձեանները իրենց քարքիւղին կը դառնան նորեկը պատգամով, որ պէտք չըլլայ թէ դաշթակցութեան լրջը կուսակցական մտնաւորութեան եւ ոչխարամտութեան պատուարէն թափանցելէ վերջնոր շուքին մէջէն քայլդ խելգ յանդիմանալով զայցոյց տալ թէ ուր է ճշմարտ ուղին:

Արդարեւ թանր եւ անխուսափելի գալթակցութեան մը միջոցի օմերուն մէջ կը գտնուինք: Ինչպէս կը թուի որ ներքին եւ անտեղի ոչ մէկ միջոց չէ խնայած ցարդ իր հեռաւորներու շարքերը բազմապատկելու համար, մինչ մէկ կողմէն իր հպարտաւայ այսպիսի միջոցներով ձեռք բերած իր գերտգաս զօրութեամբ, միւս կողմէ սակայն իր գոյսութեան կոնքը մղել կարենալու համար, հարկ կը տեսնէ այնպիսի քայլեր առնելու, որ բարոյապէս, ինչպէս սնանկ կազմակերպութիւն մը հազիւ թոյլ պիտի տար իրենի ձիւղ միեւնոյն րոպէին Վերակաղմ. Հնչակ. կուսակցութիւնը եւս որ իր բարոյական ուժով միայն կարող եղած է ցարդ պարծել, այսօր ուրանալով իրեն գոյութեան իրաւունք տոող ամէն սկզբունք սնանկ կը ինչպէս ինքզինքը ամէն «բարի նախապաշարութիւն» հանդէպ, որոնք տարբերութիւն արգելք եղած էին իրեն դաշնակցութեան վայելած առատ դափնիները վայելելու: Ու ահա սրբուած մաքրած ամէն սրբութիւններէ եւ մաքրութենէ, երկու կուսակցութիւնները ժամանակը եկած կը համարեն իրարու համեարայնութեան ձեռք երկնցնելու:

Ու ճիշդ ուրացումի այդ վայրկեանին աքաղաղը կը խօսի Առաքելական միւս եզերքէն: «Այսօր գործող կուսակցութիւնները կարելի է համարձակ կերպով ըսել, մօտ են արդէն այն շրջանին, ուր գաղափարներու, ծրագիրներու, գտնում կատարելու պիտի կրնան ձեռնարկել, զօրացած իրենց փորձառութեամբ, այլ մասնաւոր պատասխանատուութիւններու հղիտակցութիւնովը, որ աստիճանաբար

— Կը յուսմաք թէ օր մը պիտի կըրնան հանդիպել ընտանիքիդ թշուառութիւնը պատրաստող այդ շարագործին:

— Աստուած... քանի ու կը հաւատամ թէ գրած է ան կը յուսամ թէ անոր աչքը շարունակ շարագործին վրայէն չը հեռանար... նայապէս կը հաւատամ թէ կուտալնորդէ ան իմ քայլերս ու տառերներու մէջ ծածկուած թշնամիս ցոյց կուտայ ինծի:

— Երբ գտնուի ըլլաւ թշնամիդ, ինչ կերպ պիտի լուծես վրէժդ: Արդարութեամբ պիտի յանձնես, թէ ոչ:

— Արդարութիւնն իմ խիղճս... երբ գտած եմ թշնամիս, ան ատեն պիտի գործեմ, ինչպէ՞ս որ կը թեկադրէ զիս ներքին ձայնս:

(Շարունակելի)

կանի քանի որ յեղափոխական գաղափարը յաղթանակէ յաղթանակ կը քայլէ:

Արտասազդ

### ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Տեղւոյ թաղ խորհրդոյ յանձնարարութեամբ Տ. Աբխողով քհն. Թորոսեան անցեալ չորեքշաբթի օրէ ի վեր սկսած է ժապաւէնեալ տոմարով Վառնայի ազգայնոց մէջ հանգանակութիւն ընել ի նպատակ հանգստեցեալ Աղաւթեանի աշխատիքի և որբերուն, որ իրենց ներկայ դառն կացութեան մէջ ազգայնոց կարեկցութեանը կարօտ են:

Կը յուսանք որ ամեն անոնք որ խիղճ մը ունին, և Աղաւթեանի մահուան վրայ ցաւած են, յօժարութեամբ և սիրով կը մասնակցին յիշեալ հանգանակութեան:

— Բնիկ Տիգրանակերտցի Տ. Մկրտիչ Գարանֆիլեան ազգայինը Ամերիկայի Ուէնթ Զօպօքնի երրորդ թաղի ժողովրդային ընտրութեամբ հաշտարար դատուոր եղած է: Այս առաջին անգամն է որ Ամերիկայի մէջ հայ մը կարժանանայ այսպիսի պատուաւոր պաշտօնի:

— Ամրմէնիաի մէջ կը կարգանք որ Մանչեսթրի մեծահարուստ հայ գործատէրներէ մի քանին ընկերութիւն մը կազմելով, «Առեւտրական Դրամատուն» Մանչեսթրի անունով 500,000 անգլիական ոսկւոյ դրամագլխով դրամատուն մը պիտի հաստատեն ի մօտոյ:

Հիմնադիրներն արդէն ստորագրած են ամբողջ դրամագլխի կէորը, այն է՝ Ա. Մանթաֆ, 80,000 ոսկի, Պողոս Նուպար փաշա 40,000 ոսկի, Ժամհարեանց 40,000, Ս. Գուլումեան 20,000 Ալինաքեան 20,000, Գ. Թովմաբեան 20,000, Սպարթուկեան 20,000 և այլք 20,000 ոսկի:

— Կովկասեան հայ տառապելոց համար հաստատուած նպատակատար Յանձնաժողովոյ յայտարարութենէն կիմանանք որ Յանձնաժողովը այլեւայլ հայաբնակ երկիրներէ ստացած և տառապելոց բաժնած է 217,192 ռուպլի և 52 կօպէկ:

— Աթլէքի նորաշէն հայ եկեղեցւոյ հողեւոր հովիւ Վանեցի Տէր Աւետիսեան Տէր Դաւիթ քահանան Մարտիկա գացեր է, և անկէ պիտի երթայ Բարիդ, Լօնտօն և Մանչեսթր յիշեալ եկեղեցւոյ 12000 ֆր. բաց պարտքին համար դրամ հաւաքելու:

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարձրագատիւ իշխանը Հունգարիա գնաց, իր բացակայութիւնը շատ չպիտի աւելնայ:

Մեկնելէ առաջ՝ Նորին Արքայական բարձրութիւնը իր անձնապահ զօրագնդին քսանամեայ տարեգարձին առթիւ, «Աղեքսանտր» կարգին ականակու չքանչանը շնորհեց նոյն գնդին հրամանատար պ. Մարքոֆին:

— Պուրկաղի նահանգական դատարանի որոշմամբ՝ Ահեօլուի Յոյն եպիսկոպոս գեր, Վասիլիոսը որ մինչև հիմայ Սիլվէնի բանաւըն էր, աշատ արձակուելով պօլիս գնաց:

— Սօպրանիէի նոր հաստատած մի օրէնքի համաձայն, գիւղական շրջանակներու մէջ անշարժ ստացուածոց աէր եղող բոլոր օտարահպատակները, այսուհետեւ պիտի պարտաւորին Պուրկաղի հպատակ ըլլալ:

— Կառավարական որոշմամբ ի մօտոյ ամեն քաղաքաց և գիւղերու թուրքական հին անունները պուրկարական անուններու պիտի վերածուին:

— Նոյեմբ. 28ին Բլէվնէի մէջ մեծ հանդէսով տօնուէր է նոյն քաղաքի թուրքերէն առման տարեգարձը:

— Վառնայի Անգղիական Դերձիկատոս պրն Մասի որ Եւրոպա գացած էր, վերադարձաւ իր պաշտօնատեղին:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

#### ԹՈՒՐԻՔԻԱ

500ի չափ նաւային զօրքեր նաւորանի ետեւ եղող թուրքաց գերեզմանատան մօտ ծովային պաշտօնէութեան դէմ ցոյց մը բերին, ըսելով որ ծովային նախարարը ըստ օրինի սահմանեալ ժամանակէն աւելի կը պահէ զիրենք ծառայութեան մէջ:

Ծովային շրջանկիրներու հըրամանատար պ. Մէվն քարակոծեցին, և շատ գէշ վարուեցան ամեն այն սպայից հետ որ անկէց կանցնէին: Ծովային նախարարի թիկնապահ փոխ ծովակալ Ահմետ փաշան ալ վերադարձուեցաւ ու անհնար եղաւ հանդարտեցնել զիրենք:

— Էրզրումի թէ մահմետական և թէ հայ ժողովուրդը հազարաւոր ստորագրութիւններ հաւաքելով յայտագիր մը խրկած են Սուլթանին, որով կը բողոքեն այն ապօրինի և հարստահարական տրոց դէմ, որ կառավարական պաշտօնեայք գանձել կուզեն, ժողովուրդը յայտարարած է նաև որ պիտի մերժէ ամեն ուրիշ պահանջուած տուրքերն ալ վճարելու և ամեն կա-

ռավարութեան պաշտօնեաները պիտի արտաքսէ: Այս յեղափոխական գործը ծանր հետեւանք կըսպառնայ:

— Նէճիպ Մէլհամէ փաշան Բերայի մութասարիֆ Ռէշիտ փաշայի հետ ամենաստատիկ վիճաբանութիւն մը ունեցաւ՝ Հայու մը մասին, որ ամբաստանված էր Ֆէհիմ փաշայի կառքին վրայ նետված ռումբի գործին մէջ: Նէճիպ փաշա կուղէ արձակել տալ ան հայը, իսկ Ռէշիտ փաշան կը հակառակի և չուզեր արձակել: Ասոր վրայ Նէճիպ փաշան գործը պալատին հաղորդելով յայտարարել է, որ իր փաշայութեան տիտղոսէն պիտի հըրաժարի, եթէ իր ըսածը չըլլայ:

Հարիւրաւոր անմեղ հայեր բանտարկել առուղ Նէճիպ Մէլհամէին այս անգամ բանտարկեալ Հայու մը արձակմանը համար ըրած սաստիկ պահանջունին ներքեւ ո՞ գիտէ ինչ գաղտնիք և ինչ խաղ կայ:

— Պաշտատի վալիին փոփոխութիւնը իրաց կացութիւնը չբարելաւեց, վասնզի վիլայէթն ամբողջ ապստամբած է: Զանազան կետերու վրայ Նէճիպ մեծ յեղափոխութեան մէջ է: Ֆէյզի փաշայի բանակը զօրոցներու համար Եմէն խրկուած զօրագունք մը ապստամբ Պետեվիներէն յանկարծակի պաշարելով անձնատուր եղած է: Ֆէյզի փաշայի բանակը հակառակ պաշտօնական յայտարարութեանց, խիստ վատ դրութեան մէջ է ի Սանաա:

#### ՊԱՐՏԱԿԱՍՏԱՆ

Գահաժառանգ իշխանը տմոյս վերջը կսպասվի ի Դեհրան:

Սալարէթ Տօվլէհի կառավարած պարսկական քիւրաստանի մէջ մեծ անկարգութիւններ ծագեցան: Սալարէթ Տօվլէհ բազմաթիւ ձիաւորներու գլուխն անցած գիւղերը մտաւ ու ուղեց արդէն գանձված տուրքերը վերըստին գանձել բնակիչներէն: Ասոր վրայ խռովարար ցեղ մը ապստամբելով յիշեալ կառավարիչ իշխանին զօրքը շարկաւ յաղթեց, իշխանը փախաւ իր բնակած տունէն թողնելով շատ մեռելներ պատերազմի դաշտին վրայ:

— Վերջին հասած հեռագիրները կըսեն որ Շահին հիւանդութիւնը խիստ սաստկացած է, և Շահին վրայ մարելիք կուգայ:

#### ՄԵԱԿ

Օրաթերթ քաղաքական, գրական Բաթնիզինը՝ Եւրոպայի համար 30 ֆր. Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաստանի և Ռուսաստանի համար 10 ռուպլի տարեկան:

Հասցէ՝ Խմբագրութիւն «ՄԵԱԿ» թիֆլիս կովկաս)

### ԱԶԳ

— \* —

Տէր և Տիկին Յակոբեանները պատիւ ունին յարգել թատերասիրաց յայտարարել թէ՛ իրենց Տնօրինութեան ներքեւ եղող «ՕՐԻԱՆԹԱՆ» թատերախումբով՝ որ հին «ՎԵՍԵԼՈ» ու «ՆՅԻԻՆԻ» թատերախումբերու ծանօթ ու սիրուած դէմքերէն Պրն. Ե. Երամեանի. Լ. Շաքարեանի և Մ. Թաչեանի օժտեղակ աշխատակցութեամբ լրացած և կատարելագործուած է. ի մօտոյ Ֆիլիպէ պիտի ժամանեն հոն միամետայ շոջան մը ոլորելու համար իրենց բարոյալից թատերգներով ու խիստ ծիծաղալար զաւեշտներով:

Յուշով ենք որ ինչպէս որ կըցած ենք ամեն կիրպել յարգել թատերասիրաց ծափին ու դրուատիքին արժանանալու մեծ քաջակրօնները զրոյնն, այս անգամ ալ մեր այս անխոնջ աշխատութեան յարգն ու արժէքը ծանօցուելով չպիտի զլացուի պէտք եղած քաջակրօնքն ու աշխատութիւնը:

Տէր և Տիկ. Յակոբեաններ

### ՀԱՅ ԴԵՂԱՎԱՃԱՌԱՍՏՈՒՆ Ս. ԳԱՆԱՐԵԱՆ և ԸՆԿ.

Ս օ լ ու Ն ս ք ա փ ո ղ ո ց

(Պալլաք բազար) Թիւ 524

1 ուշաթըրքին ճիշտ տակը

Նոր բացուած սոյն գեղավաճառատան մէջ կը գտնուի մաքուր և առաջնակարգ գեղերու մեծաքանակ մը՝ թերթէ զատ, թարմ հանքային ջուրեր, եւրոպական ամեն տեսակ ըսքսիւլիթներ, բժշկական աճառներ, քուլուրի ապրանք վերաբերեալ բոլոր առարկաներ, երկաթէօրներ, պիպէրօններ, ջերմաչափներ ևն. ևն.

Լիսնցմէ զատ կը գտնուին աւել ռուսականութեան, ոսկերչութեան և առհասարակ արհեստի վերաբերեալ քիմիական մաքուր քաղաքութիւններ:

Ն օ Ր Վ Ե Կ Ի Վ Յ Ի Դ Կ Ա Ն Ի Լ Գ

Յարգ գեղերուն սղութենէն դժգոհութիւն յայտնողները կը բաւէ որ անգամ մը կիմեն նոր գեղավաճառատունս, ուր ապահովաբար պիտի գտնեն գներու աժանութեան հետ գեղերու ընտրելագոյնները:

Շրջակայ քաղաքներու և գիւղերու մէջ գեղերու կրկնավաճառումով զբաղող խանութպաններու համար մասնաւոր գեղէ:

Յանձնարարութիւնները փութով և ճշգրտեամբ կը գործադրուին:

### ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Բաժանորդագին

Պուրկաղի համար տարեկան 10 ֆր. Արտասահմանի » » 12 ֆր.

Խմբագիր Կ. ԴԱԼՅԱՅԵԱՆ

Ուրիշ տեղաւորումներ, 2. Չիֆուրթ Թիւ 29 Ռուսուրդ

Одговор редакторъ А. Курбетянъ

печатница Д. Тодоровъ и С-но —Варна